

ՀԱՅԿԱԿԱՆՔ*



Տեղեկութիւններ Արամի մասին (Թ-դ դարի դրոյ): Այլ և Անանիա Մոկացու մասին:

Արամի անունը մեր «Հին Գաղութեան» պատմութեանց մէջ մտած չէ դեռ ևս: Այս դրոյի միակ մի երկասիրութիւնն է ինձ յայտնի և այն միայն մի ձեռագրում (տե՛ս § 2): Այդ դրումքի վերնագիրն է. «Թուղթ Արամայ. Զոր գրեաց պատասխանի Ատուկոյ Անձաւացեաց իշխանի ի սակս պէսպէս հարցմանցն»: Գրումքի սկզբնաւորութիւնն է. «Աստուա՜ «Ծաղա՜ և աստուածասէր իշխանիդ իմոյ մե՜ «Ծաղա՜. Ա՜ծատունկ իմաստիցդ զիր և «հրաման եհաս առ իս. զոր ընթերցեալ յոյժ «ուրախ եղէ զայ՛, որ բազմաշառաւիղ հա՜ «ւառոց քոց և հոգեհանձար խոհականու՜ «թեանդ՝ զպտուղ խոնարհութեան շնորհաց «առ ընդունելոյ զաղքատիմաց իմոյ զձառս «ողբերգութեան առ սոգէտս մանկանց եկեղե՜ «ցոյ կենդանաբաժին որբութեամբ օտարա՜ «ցեալ յերկնային մեծութենէն, որ ի տան «տեսուն տնդեալս և ի գաւիթս աստուծոյ «ծաղիկալս, նաև որ զիշոցն մեղաց զգնա՜ «լան տեսակս խոնարհեցայք հարցանել ցիս. «թէ որպէս իմանի տարբերութիւնք ն՛ց և «թիւնաւորութիւնք յերկարալիքք. որպէս «հնար է զբազմացն խայթոց՝ ի մարմին ժո՜ «ղովեալ՝ որոնել ըստ մոխրն առնել և զեւն, «զի համբերել կարացէ ցաւոցն»:

Գրումքի վերջաւորութիւնն է. «Եւ որ «զջուրն ի գլինի փոխեաց՝ զձեր տրամութիւ՜ «նրդ յուրախութիւն փոխեացէ, ի տէր խըն՜ «դալ ձեզ ի տարեկանն կենդանութեան տօ՜ «նրս կատարել»: (Զեռ. Բեբ. 407—416):

Գրումքի լեզուից և մի քանի ուրիշ հան՜

գամանքներից ևս արդէն ենթադրում էի, որ Արամը պէտք է զրաժ լինէր Թ-դ դարում երբ՝ բարբաղդարար՝ այդ մասին յաջողուեց ինձ գտնել և ժամանակակցի վկայութիւն: Անանիա Մոկացի կաթողիկոսը իւր վիճարանական թղթերից մէկում (ընդդէմ Խոսրով Անձեւացու՝ Նարէկ-Յօրէ) ասում է. «Այս են հանգամանք Բ և Գ. եպիսկոպոսաց՝ այլոցն համաձայնութեամբ և ընծայական թխտով մայրաքաղաքացոյն ձեռնադրել պատրիարկ, և ոչ լոկ եպիսկոպոս. ուսիր ոչ որպէս քեզ թուի հայրապետ՝ վասն Աւան քաղաքին կամ արքայական դրան եպիսկոպոս զօրով՝ այլքանօք միայն առաւելուլ զահեղիցութեամբ, ապա թէ ոչ՝ պարտ էր ի տեսեանն սբ Լուսաւորչին զմիապետութիւնն ի վր Արիանոսի տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու արքայական դրան բանակին, որում և՛ ըստ քեզ՝ աւելորդ էր քան զԱրիանոս այլում կարօտանալ եպիսկոպոսի, այսինքն Ռատագիսի կամ այլ ումք: Իսկ տպա Երուսաղէմի և Աղեքսանդրի և Անտիոքայ եպիսկոպոսն յոյժ կրօնսերաբոյնք են, վասն ոչ զոք ունե[ւոյ] թագաւոր, ի ձեռն որոյ զահափառեալ բարձրանալին քան զընկերսն: Ընդէր ոչ կամիս հաւանել օրինական ասացելոցն, որ ի միասնականութիւնն կրթել միշտ հանդիսանայր. Գ. անգամ ի տարւոյն յանդիման լինել օրինադրէ բոլոր Խորայէլի եւանել ի տեղին, զոր ընտրեսցէ տր, և զայն ոչ դատարկաձեռն: Այլ զիտեմ զի պարսաւի առ ի քէն «ոչ դատարկաձեռն» յիշատակել որ ասես Ո՛վ կացոյց զիս կապալտտէր կաթողիկոսի, և զայն ոչ աճես զմտաւ եթէ զբոլոր զձեռամբ անկեալքս քոյ ո՛վ կացոյց քեզ պարտապան, և անողորմապէս դանձել տոկոսս խուռն զօշաքաղութեամբ, ո՛վ դերազանցեալք քան զՊօղոս և ի յերբորդն ժամանեալ յերկինն և զեւն անձառականն լուեալ. անխաւեր քեզ համարեալ Պօղոսի մեծաջանութիւնն, առ ի ժողովել զպտուղն երբեմն ի կողմանս Ասորոց փութալով ինքն, և Բառնաբաս եւանել յԵրուսաղէմ առ ի պաշտել զտուրքս, և երբեմն ի

*. Տես նախընթաց համարը.

կողմանս Աբայեցւոց և Թեոսաղոնիկեցւոց, բա-
ղում նախանձայորդոր հնարիւք վաղվադել ի
պաշտօն սրբոյն որ յԱրուստարէմ: Այլ դու
Աբայէն աշակերտեալ, անցուցեր զնովաւ, զի
նա թերեւս զսրտուղ երախայրեացն միայն ար-
գելուլ բաջադէր, այլ դու բնաւին զհայրա-
պետականս բառնալ զաթոռն ձեռնարկեցեր,
զի անհոգ [յ]լնծայարեբութենէ ըստաօղիս
կեանս: (Սորին Անանիայի Հայոց կաթողիկոս-
սի. «Բայց արդ սակաւութեամբ»):

Անանիա Մարեկացու Բիւշիւն պարզուած
են ոչ միայն այս հայրապետի և Մարեկեան
Գրքի ընդհանրապէս և մասնաւորապէս Խոս-
տով Անձեացու՝ մինչև այժմս վիճելի, լաւ
զհասկացուած և կամ զհիտութեամբ քօղար-
կուած յարարեբութիւնները, այլ և Արամի
ժամանակը և նշանակութիւնը: Խոստով Ան-
ձեացին Արամի աշակերտ է կոչուած կամ՝ ո-
րովհետև իսկապէս նրա աշակերտն էր և կամ՝
որովհետև հետեող էր նրա վարդապետու-
թեան: Տեսանք որ Արամի մեր ձեռքն հա-
սած միակ թուղթն էլ ուղղուած է՝ Ան-
ձեաց Ատոմ՝ իշխանին: Խոստով Անձեացու
ժամանակակից և ազգական Անանիա Մարե-
կացու և Անանիա Մոկացու յարարեբութեանց
մասին մենք արդէն առիթ ենք ունեցել մեր
ենթադրութիւնները յայտնելու, որոնք այս
նոր փաստերով աւելի ևս հաւաստիանում են
(Տես մեր հր. «Գիր Խոստովանութեան», յա-
ռաջարան):

Խնդիրն աւելի ևս կարգուի, երբ կհրա-
տարակենք Անանիա Մոկացու արդէն տպագր-
ութեան համար բոլորովին պատրաստ թղթ-
թերթ, ծանօթութիւններով և բնագրի բազ-
րատութեամբ: [Այս թղթերն են. Ա. «Տեսա-
ռէն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղա-
զս ապստամբութեան տանն Աղուանից, որ
ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռ-
նադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի
Աթոռոյն» (չատ հետաքրքրական և լի պատ-
մական տեղեկութիւններով). Բ. «Տեսառն Ան-
անիայի Հայոց կաթողիկոսի Պատմառ յաղա-
զըս զԽոստով նշովելոյն զԱնձեացւոց եպիս-

կոպոսն». Գ. «Սորին Տեսառն Անանիայի Հա-
յոց կաթողիկոսի. Յաղազս որ ասեն թէ՝ մի
պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, և վա-
սըն մի լինելոյ կոչմանն». Դ. «Սորին Տեսառն
Անանիայի Հայոց կաթողիկոսի. «Բայց այդ սա-
կաւութեամբ»...]: Անանիա Մոկացի կաթողիկոսը՝
թէև նեղ վանական կրթութեամբ անձն իւր
հակառակորդներից պակաս զհիտութեամբ և
հետեակ գրիչ սակայն մեր կաթողիկոսների
շարքին մէջ նշանաւոր և առաջնակարգ տի-
պերից մէկն է. անխոնջ, որոշ զաղափարի ծա-
ռայող, նախանձաւոր Լուսաւորչի Աթոռի միա-
պետութեանը և իշխանութեան սահմաննե-
րին, կամքի տէր, անվեհեր, անձնազոհ, խիստ
բայց քաղաքագէտ և ամեն յարգանքի ու
լուրջ ուսումնասիրութեան արժանի մի անձ-
նաւորութիւն: Ինչ վերաբերում է Աբայի և
Յաղազի իշխանին, որի հրամանով Արամը զրեց
իւր թուղթը, կարծում եմ որ այս նոյն այն
Ատոմն է, որ յիշուած է հետեւեալ յիշատա-
կարանների մէջ. «Թարգմանեցաւ վկայաբա-
նութիւն ծառայիս Աստուծոյ (Արղմանհի)
յասորի գլոց ի հայ, հրամանաւ աստուա-
ծապահ տեսառն Գուրգենայ Արծրունւոյ Ան-
ձեացեաց տեսառն Յի. (873) թուականու-
թեանս Հայոց. յօգնականութիւն անձին իւ-
րոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածա-
սիրի, և որդւոց իւրոց Տաճատայ և Աբայայ»
(Զարբ. Հին Դպ. եր. 514):

— «ՆԼ թուականին գրուած մատենի մը
մէջ ալ կը յիշատակուի Ատոմ՝ Անձեացի,
որովհետեւ ասիւ է՝ ասիւ է մէջ ասիւ-
րած, որուն հրամանաւ՝ Արտաւազդ Մա-
ղազունեաց (Մաղազունեաց ?) տէրն «բացայայ-
տեաց զսուրբ պատուիրանս» (Զարբ. Հին Դպ.
եր. 550):

— Կայ թուղթ մ'ալ յանուն Թովմայի(?)
առ Աբայի: (Զարբ. Հին Դպ. եր. 550):

Արդեօք այս Ատոմ իշխանը միւսնոյն անձն
է Ատոմ Անձեացեաց եպիսկոպոսի հետ: (Տես
Զարբ.—550):

Արամը ծագիկց ամենայն հաւանականու-
թեամբ Թուղի վերջերը և Թուղ գարի սկզբին,

Խոսքով Անձեացուց առաջ: Վերջինիս մասին Անանիա Մոկացին ասում է, «Քանզի [Ի] ՆԳ. (954) թուականիս և ի Գլխան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսքով անունն որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձեացեացըն, այր համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ զարդացեալ, յանկարծակի իրբե և ի դիւական հոգւոյն շարժեալ, ազանց իրիք հակառակութեանս սկսաւ նախ զբարբառն գերակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւռիակի, կոչել և զՆրուսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է՝ ի սոյն յառեալ բարբառ: Իսկ զկնի այսորիկ տպա այլ յառաջեաց բաժաորունս անհեղեղս, քանզի հրամայէր մինչև մօրուս եկեալ՝ զգլուխ խուզել մանկանց, թէ այսր աղագաւ կոչի կրտրիճ, և զկնի մօրուացն զհերան տպա թողուլ, երկայնիլ և մանիլ ցարունսն զի այսր աղագաւ կոչին մանուկ: Եւ այս երկարեալ առանգամ մի տպա և յեկեղեցի եմոյճ զբաժաղմանն իւրոյ զգայուն, քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն որ քահանայքն աւրհնեն և այլ զոր ոչ աւրհնեն, միապատիւ է և աւելորդ զաւրհնելն վարկանիմ: Եւ յայտոսիկ ներեալ մեր նմա տպա սկաւ այլ իմն նոր հերձուած աւանդել, մուծանել յեկեղեցի աստուծոյ, քանզի ասէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին... և զբանդ «կոչումն» լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն: Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւելլ զոր աղաչեալ մեր բաղում անգամ՝ դառնալ նմա [յ]այնմ անուղայ և մտախար խորհրդոց, զոր թէ և արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղել, զոր հարկեալ ի հրամանէ այ կտրել հրեղէն սրովն և զբաժինն ընդ կեղծաւորան զնելլ որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն, վասնորոյ հարկեցաք զրել զայս մնացական կտակ առ

յապա եկելոցն, զի զգուշացին յայնպիսի ընդվայրայած յնութեանց և ուղղութեամբ նկատեացն զաւելորի առ հանդերձեալ կեանսըն զի շատ է աւաւն չար իւր» (Անան. Մոկացի. Պատճառ յաղագս զԽոսքով նշովելոյն, անտիպ: Տէս. և Կիրակոս պատմ. և Ուսպելեան):

Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու և Արամի անտիպ գրուածքները կհրատարակուին մի հատորով կամ առանձին առանձին, ըստ յարմարութեան, երբ այդ ինձ հնարաւոր կը լինի: Տես և իմ հր. «Գիր Խոսքով»:

ՄԻԱԲԵՆ.



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂԱՌԻԱԺ Ի ԿՈՆԴԱԿԱՅ
ՎԵՆ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 461 առ Մարգար Պօպօյի որով գովէ զազգօգուտ և զգովելի ինքնայօժար ձեռնարկ նուիրաբերութեան նուրս միոյ հոյակապ տան արժուութեամբ քսան հազար ռուբլեաց ի նպատա ծխական գարոցաց Հայոց Ստաւրոպօլ քաղաքի ի մշտնջենաւոր յիշատակ Պօպօյեան տոհմին: 18 նոյեմ. 1893:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 470 առ Սահակ Յովհաննէս, Նիկիդայոս և Աթանոս Ժամհարեան եղբորո, որով գովէ զկրօնասիրութիւն և զազգասիրութիւն սոցա տպացուցեալս արգեամբք և գործովք իսկ առաքելով 17000 ռուբլիս ի տնօրինել զարժանն վասն կրթութեան Հայազն մանկանց: 19 նոյեմ:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 471 առ Նոր-Նախիջևանցի ազգայինս բնակեալս ի Մոսկուսա որով